ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

26.09.2018թ. N 02/16.4/4758-18

<<Վանարխ>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Ավետիք ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Հիմք ընդունելով <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե) և <<Վանարխ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքված Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կատարման ընթացքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018 թվականի օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 18-ին ներկայացված արձանագրությունները, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2018 թվականի սեպտեմբերի 27-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 3 740 000 (երեք միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 2018 թվականի սեպտեմբերի 27-ին կտեղադրվի gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Invalid signature

X

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և
հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727